

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ՝ ՈՐ ԻՆԶԵՉԻՆՔ ԿԸ ԿՐԿՆԷ

Posted on January 24, 2016 by Keghart



Category: [Opinions](#)



այլեւ անելին...: Ան պատմական տուեալներէ մեկնելով կամրջեց այսօրուայ տեղի ունեցած շատ մը ոճրագործութիւնները եւ ցեղասպանութիւնները տարածաշրջանէն ներս՝ եւ ուր հայկականը նկատեց անոնց ենթահողը...: «Ցեղասպանութիւնները իրար հետ կապուած եւ ամբողջուած են», ըսաւ Տոնալտ, «եւ որ միջեւ այսօր կրկնուող եւ շարունակուող իրականութիւններ են: Եւ Հայկական Ցեղասպանութիւնը, որ քսաներորդ դարու առաջինն էր, եւ որ միջեւ այսօր կը մնայ անպատիժ՝ տուն տուած է կրկնուող եւ շարունակուող այլ ցեղասպանութիւններու»:

Գեորգ Ճալոյեանը Սուրիահայ է: Ան քսանչորս երկար տարիներ ապրած է Հասաքէ, որմէ ետք Հալէպ եւ այժմ Պէյրութ: Եթէ Գեորգը համեստ հայն է՝ բայց նաեւ ունի պարզ ու յստակ օրագրութիւններ իր ապրած պատանեկան եւ երիտասարդական օրերէն: Եւ այդ օրագրութիւններուն մէջ կայ մէկ յատկանշական տեղեկագրութիւն մը Սուրիոյ Հասաքէ քաղաքի հարաւ-արեւելեան կողմը՝ Իրաքեան սահմանին մօտիկ, նաւթահորերու պեղումներու կեդրոն՝ Խաֆսա շրջանը (արաբերէն կը նշանակէ փոս):

Գեորգը կը գրէ.- «Երբ կը յիշուին տխրահռչակ անունները Արեւմտահայաստանէն դէպի հարաւ Ռաս-իւլ-Այնէն միջեւ անիծեալ Տէր Չօրը, ուշադրութիւնս գրաւած է որ Մարքատա, Շետտատէ, Սուվարի շարքին պէտք է յիշուի նաեւ Խաֆսա շրջանը»: Եւ Գեորգին համար Խաֆսան զբօսաշրջիկութեան վայր չէ՝ այլ...նահատակութեան :

«Այս վայրը, խիստ ամայի եւ մեկուսացած, ստորերկրեայ ընդարձակ քարայր-փոս մըն է: Քարայրին բերանը պզտիկ սենեակի մը տարածութեամբ եւ իջուածքը ուղղածիզ, բերանէն դէպի վար, երեք մէթրէն անելի, ներքեւը՝ լաբիրինթոսի պէս բազում ճիւղաւորումներ կը տարածուին ծուռ ու մուռ ուղղութիւններով: Միակ մուտքի ճամբան, գիտցողին համար, նեղլիկ ձոր-արահետ մըն է», կըսէ Գեորգ: «Եթէ անզգուշութեամբ, քիչ մը խորերը ընթանաս՝ մուտք, խոնաւ եւ ժայռերու ճեղքուածքներուն մէջէն, կրնաս կորսուիլ եւ չես կրնար դուրս ելլել...»:

Բայց Գեորգ փորձած էր իր ընկերներուն հետ մտնել այս «լաբիրինթոսին» մէջ...: «Երկար սանդուխ մը գործածելով, մի քանի ընկերներով իջանք այս քարայր-փոսին մէջ. ձեռքերնիս լապտերներ եւ վառած մոմեր»: Եւ Գեորգ կրցած էր կռահել թէ շատ շուտով պիտի կորսուէին այս քարայրին մէջ...: «Յառաջացանք երեսուն-երեսունհինգ մէթրի չափ եւ վախցանք...եւ ետ դուրս ելանք...»:

Գեորգին այս արկածախնդրութիւնը եթէ զգալ էր թէ ինչպէս հայր տարուեցաւ այս քարայրին մէջ, բայց նաեւ փորձ մըն էր գտնելու հետքեր...: «Թերեւս հանդիպէինք մարդկային ոսկորներու եւ հետերնիս բերէինք...»: Եւ «ոսկորները» ուրիշինը չէին եթէ ոչ հայունը՝ Գեորգին ինքնութիւնը...:

Գեորգ կը շարունակէ իր օրագրութիւնը՝ եւ գրի առած է ականատեսներու «օրին» ապրած անապատաբնակ վկաներուն տեղեկութիւնները...: «Հագարաւոր հայ տարագեալներ բռնի քշուած ու բերուած եւ հաւաքուած են այս վայրին մէջ, նետելով զիրենք եւ լեցնելով ու իրար վրայ թխմելով այս փոս-քարայրին մէջ»:

Բայց երեւի չէին բաւեր այդ բոլոր զրկանքները...: «Չորցած մացաներ, յարդի շիւղեր, տրցակ-տրցակ այրելով, քարայրի բերանէն նետած են վար...»: Եւ ըրած են այս՝

Բայց մինչ այդ կայ տակաւին «խափսայի» ցաւը...: Ու շատ մը «այլ» ցաւեր՝ հոս թէ հոն..., որոնք կը կրկնուին ու կը շարունակեն «ցաւցնել»...:

Եւ մինչեւ ե՞րբ է որ պատմութիւնը պիտի շարունակէ կրկնել ինքզինք...:

